Էսաց.—Ընձը ունիմ քեառսուն ախպէր, էդա քեառսուն աղ-ջիկ,—քեառսուն տէրտէր պտի բիրիս էստեղ, մէկ էկեղեցի շինիս, կարգիս վիրենքտիր։

Բաղդասարը գերըզմի վերայ քեառսուն խուրան ժամ շի-նիցին, անուն դրին սըվ Սարգիս (մկայ էլ անուն սըվ Սարգիս ը). քեառսուն տէրտէր քեառսուն աղջիկ փսակիցին Մհերը ախ-պիրնիրու վերայ։

Թագաւուր էնդեղ էսաց.—Մհեր, քիւ ախպրնիր փսակիցը, մէ աղջիկ մ' ունիմ, տամ քի։

Էսաց.—Ես չիմ ուզը, մէ կնիկ ունիմ գեղ Գիւրջիստան (ին-կաւ միտ կնիկ։ Էսաց՝ վայ, ես էլ կնկան տէր իմ)։

Էլաւ, առից ուր քեառսուն ախպէր, դարձան, էկան Հալաբ։ Մէկ ախպէր նստաւ Հալաբայ քեաղաք Թագաւուր, մէկէլ էլան կեացին Մաքամադին. էնդեղ բռնիցին էրկու ախպէր՝ Կուզբադնի Թոռնիր, էնունց ազգ կտրիցին, գեռռիցին էնդեղ, անուն տրին Մա-քամադին։

Մհեր էլաւ, էկաւ Ջզիրու քեաղաք. Ջզիրու քեաղաք մէկ գիտ կայ, անուն Ջզիրու Շատ. կ'ըլնը, որ խարիր քեառսուն գիտ իրարու կ'խառնուը, կ'ըլնը մէկ գիտ։

Էդ գիտ իրեք անգամ զէն քեաղաք աւիրից։ Մհեր էկաւ էն-դեղ, մէկ մեծ ահագին քեար իպի, կցից քեաղաքի քեամակ, գիտու մէջ. գիտ էլաւ էրկու ճեռղ, մէկ ճեռղ էն եանէն կիեայ, մէկ էն, էլ քեաղաք չի աւիրի։ Բրջայ բալաքն էլ վեար էն քեարին շինից. իսկի աւիրիլ չ'կայ էն բիրդին։

Համա մէկ ժամանակ տ'ըլնը Ակն-Անանին, տ'աւիրի քեաղաքն Ջզիրին։

Մհեր էլաւ, էկաւ Սասման տուն. էկաւ, տեսաւ՝ խրօխպէր մե-ռած ի։ Կինաց Զէնով-Ցեռվանի գերըզմընը վերայ, էսաց.

«Խէրախուրթ խրօխպէր, վիր իլի,
տիւն էլ վիր իլի»։